ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «22» փետրվարի 2012թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 09 Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 14-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» N 1555-Ն որոշման հավելվածի N 2-ի 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ձևավորել գիտական կենտրոնների ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել անհատական կազմը՝ համաձայն Հավելված N 1-ի:

2. Հաստատել գիտական կենտրոնների ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Հանձնաժողովին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող տասն օրվա ընթացքում քննարկել հանձաժողովի նիստի օրվանից ոչ ուշ, քան քառասունհինգ օր առաջ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) մուտքագրված հայտը և, հիմք ընդունելով հայտի գիտական փորձաքննության արդյունքները և գիտական

կենտրոնների ձևավորման սկզբունքներն ու չափանիշները, տալ գիտական կենտրոն ձևավորելու նպատակահարմարության կամ ոչ նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն, իսկ հայտի բողոքարկման դեպքում՝ կազմակերպել կրկնակի քննարկում, բողոքարկման դիմումը կոմիտե մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գիտական ծրագրի ղեկավարի և հայտի փորձագետների մասնակցությամբ: Կրկնակի քննարկման հիման վրա տալ եզրակացություն:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի մայիսի 13-ի «Գիտական կենտրոնների ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողով ձևավորելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2009 թվականի հուլիսի 24-ի N 30-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 14-Ա/Ք հրամանը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ. Գսպոյանին:

Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի «22» փետրվարի 2012թ.
N 09-Ա/Ք հրամանի

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հարությունյան Սամվել	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ (Հանձնաժողովի նախագահ)
Դանիելյան Վահե	ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական
Մակարյան Ռոբերտ	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Մաթևոսյան Հրանտ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, ակադեմիկոս-քարտուղար (համաձայնությամբ)
Սարգսյան Յուրի	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մեքենագիտության ամբիոնի պրոֆեսոր (համաձայնությամբ)
Սուվարյան Յուրի	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (համաձայնությամբ)
Գսպոյան Վահագն	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար
Մարդոյան Լևոն	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ
Թամրազյան Հրաչյա	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն
Տոնյան Գրետա	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական կադրերի պլանավորման, որակավորման և հետազոտությունների աջակցության բաժնի պետ (Հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N 2
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի «22» փետրվարի 2012թ.
N 09-Ա/Ք հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Գիտական կենտրոնների ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

2. Հանձնաժողովի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության գիտական կենտրոնների ձևավորման գործընթացը համակարգելն է: Հանձնաժողովն իր քննարկումների և հայտերի գիտական փորձաքննության արդյունքների հիման վրա տալիս է գիտական կենտրոն ձևավորելու նպատակահարմարության կամ ոչ նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն, իսկ հայտի բողոքարկման դեպքում՝ կազմակերպվում է կրկնակի քննարկում, գիտական ծրագրի ղեկավարի և հայտի փորձագետների մասնակցությամբ: Կրկնակի քննարկման հիման վրա հանձնաժողովը տալիս է եզրակացություն:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

4. Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահը:

6. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 10-րդ կետին համապատասխան:

7. Հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է հանձնաժողովի նախագահը:

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի անդամներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ:

9. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված եզրակացությունների կատարման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի նախագահի զեկուցմամբ:

10. Հանձնաժողովն իր արտահերթ նիստերը գումարում է հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

11. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի կազմի առնվազն երկու երրորդը:

12. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

13. Հանձնաժողովի այն անդամը, ով համաձայն չէ հանձնաժողովի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը:

14. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

15. Հանձնաժողովի նիստերին կարող են դիտորդի կարգավիճակով մասնակցել հրավիրված փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է հանձնաժողովի նիստերը.

2) ստորագրում է հանձնաժողովի եզրակացությունները և նիստերի արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

3) իր բացակայության դեպքում հանձնաժողովի անդամներից մեկին առաջարկում է վարել հանձնաժողովի նիստը.

4) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգը.

5) Հանձնաժողովի ընդունած եզրակացությունների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

6) մասնագիտական կարծիք ստանալու նպատակով իրավունք է վերապահում դիմելու հանձնաժողովի կազմում չընդգրկված համապատասխան գիտնականների և մասնագետների, որոնք ունեն գիտական աստիճան, գիտական կամ պատվավոր կոչում և վերջին հինգ տարիներին իրենց բնագավառում հասել են նվաճումների.

7) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

17. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) հանձնաժողովի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ հանձնաժողովի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

18. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի անդամն իր պաշտոնից ազատվելու պահից կորցնում է անդամակցությունը հանձնաժողովին: Նրա փոխարեն հանձնաժողովին անդամակցում է նույն պաշտոնն ստանձնած անձը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

20. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին.

2) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) ապահովում է հանձնաժողովի նիստի եզրակացությունների նախագծերի կազմումը.

4) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է հանձնաժողովի եզրակացությունների տրամադրումը հանձնաժողովի անդամներին: